

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2022 թվականի
Դեկտեմբերի 22-ին կայացած գիտական Խորհրդի N 5 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 36 անդամներից 32-ը (ցուցակը կցվում է)

Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. 2022/2023 ուստարվա 1-ին կիսամյակի դասախոսների անհատական բեռնվածությունների կատարման ընթացքը ֆակուլտետում
/զեկ. ամբ.վարիչներ/
2. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատում
/զեկ. ամբ.վարիչներ/
3. Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման» ամբիոնի վարիչի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ
/զեկ. ամբ.վարիչ Շ.Վ.Խաչատրյան/
4. 21T-1E192 ծածկագրով թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացվող գիտական թեմայի հաշվետվության քննարկում
/զեկ.գիտական ղեկավար/
5. Ընթացիկ հարցեր

Նիստի օրակարգը հաստատելուց հետո

1. **ԼՄԵՑԻՆ.** Ջրաօդերևութաբանության և Տիզիկական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց.Ա.Թ.Գրիգորյանի, Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար պրոֆ.Վ.Պ.Վարդանյանի, Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչ դոց.Շ.Վ.Խաչատրյանի, Երկրաֆիզիկայի,

ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ դոց.Մ.Ս.Մկրտչյանի, Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց.Վ.Վ.Գրիգորյանի և Սերվիսի ամբիոնի վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյանի հաղորդումը **2022/2023 ուստարվա 1-ին կիսամյակի դասախոսների անհատական բեռնվածությունների կատարման** վերաբերյալ: Ամբիոնի վարիչները ներկայացրեցին, որ դասախոսների վրա դրված բեռնվածությունը լիարժեք կատարվել է և որևէ թերացումներ չեն արձանագրվել: Եղած բացակայությունները փոխարինվել կամ լրացվել են ըստ պահանջված կարգի: Դժվարություններ կան հետազոտական բաղադրիչով առարկաների դեպքում կապված մեծ կուրսերի աշխատանքները մեկ օրում ընդունելու հետ:

ԱՌԱՋԱՐԿՈՑԻՆ. Ուսումնական բեռնվածության կատարումը բոլոր ամբիոններում համարել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ուսումնական բեռնվածության կատարումն ամբիոններում համարել բավարար:

2. ԼՄԵՑԻՆ. Ջրաօդերևութաբանության և Ֆիզիկական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց.Ա.Թ.Գրիգորյանի, Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար պրոֆ.Վ.Պ.Վարդանյանի, Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչ դոց.Շ.Վ.Խաչատրյանի, Երկրաֆիզիկայի, ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ դոց.Մ.Ս.Մկրտչյանի, Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց.Վ.Վ.Գրիգորյանի և Սերվիսի ամբիոնի վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյանի հաղորդումը ովքեր ներկայացրեցին ամբիոնում հաստատված **ավարտական աշխատանքների և մագիստրական թեզերի թեմաներն ու ղեկավարներին:** Հաղորդման ընթացքում նշվեց, որ կան ուսանողներ, ովքեր չեն ներկայացել ամբիոն և դեռ չեն ընտրել իրենց թեմաները: Կան դեպքեր երբ ավարտական և մագիստրական աշխատանքների քննարկումն իրականացվում է առցանց:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Մագիստրական թեզ, ավարտական աշխատանք չընտրած և ամբիոն չներկայացած ուսանողներին ներկայացնել հեռացման:

ՈՐՈՇԵՑԻՆ. Մագիստրական թեզ, ավարտական աշխատանք չընտրած և ամբիոն չներկայացած ուսանողներին ներկայացնել հեռացման:

3. ԼՄԵՑԻՆ. Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչ դոցենտ Շ.Վ.Խաչատրյանի հաշվետվությունն ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ: Խոսեց ամբիոնի համագործակցությունների մասին ինչպես նաև ուսանողների ուսումը Ֆրանսիայում շարունակելու հնարավորությունների մասին: Աշխատանքներ են տարվում մասնակցելու գիտ.պետ.կոմի հայտարարված մրցույթերին մասնակցելու (հաշվետվությունը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան Ս.Ա.Գրիգորյանը նշեց, որ ամբիոնը մեծ դեր ունի երկրաբան մասնագետներ պատրաստելու հարցում: Ամբիոնում կան հանրապետության լավագույն մասնագետները և առաջարկեց ամբիոնի վարիչ դոց.Շ.Խաչատրյանի ներկայացրած հաշվետվությունը գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչ դոցենտ Շ.Վ.Խաչատրյանի հաշվետվությունը և ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել բավարար:

4. ԼՄԵՑԻՆ. Դեկան Ս.Ա.Գրիգորյանը ներկայացրեց **21T-1E192 ծածկագրով թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացվող գիտական թեմայի** քննարկման վերաբերյալ Գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանի գրությունը ԵՊՀ ռեկտորին, որտեղ հստակ սահմանված են ֆակուլտետի գիտական խորհրդի (գիտական թեման հաստատած մարմնի) կողմից գիտական թեմաների քննարկման վերաբերյալ սահմանված ժամկետները (մինչև ս/թ դեկտեմբերի 12): Նշված ժամկետներում Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտխորհրդում գիտական թեմայի քննարկման հարց չի դրվել, քանի որ թեմայի գիտական ղեկավարը հրաժարվել է ընթացիկ հաշվետվությունը ժամանակին

ներկայացնելու գիտ. խորհրդին: Չնայած դրան, որ դեկտեմբերի 5-ին 6-ին այդ մասին զգուշացվել է, գիտական ղեկավարը ընթացիկ հաշվետվության քննարկումը կազմակերպել է համալսարանի Իջևանի մասնաճյուղում և ցանկացել է այն ներկայացնել ԵՊՀ-ի գիտա-կազմակերպական վարչություն, որը չի ընդունվել ԵՊՀ-ի գիտական գծով պրոռեկտոր պրն.Ռ.Բարխուդարյանի կողմից և պահանջել է, որ գիտական թեմայի ընթացիկ հաշվետվությունը պետք է քննարկվի Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտխորհրդում: Արդյունքում ս/թ դեկտեմբերի 15-ին **21T-1E192 ծածկագրով գիտական** թեմայի ընթացիկ հաշվետվությունը ներկայացվել է ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտխորհրդի անդամներին և ս/թ դեկտեմբերի 22-ին նշանակվել գիտական խորհրդի նիստ:

Դեկան Մ.Ա.Գրիգորյանը նշեց, որ քննարկվող հարցի վերաբերյալ փաստաթղթերի փաթեթը նախապես սահմանված կարգով ուղարկվել է խորհրդի անդամներին և առաջարկեց.

1. Լսել **21T-1E192** ծածկագրով թեմայի գիտական ղեկավար Թրահել Վարդանյանի հաշվետվությունը, հնարավորություն տալ ներկայացնելու թեմայի շրջանակներում մեկ տարում կատարած աշխատանքի արդյունքները
2. Ապա անցնել հաշվետվության քննարկմանը:

Թ.Վարդանյանը նշեց, որ **ինքը տեղյակ չի եղել, որ պետք է ներկայացնել հաշվետվությունը դեկտեմբերի 12-ին կայանալիք նիստին քննարկելու, չնայած այդ մասին թեմայի կատարող Ս. Սաֆարյանին ասվել է դեկտեմբերի 5 և 6-ին, բայց ըստ ինձ ով է Ս. Սաֆարյանը, որ նրան են ասել հաշվետվությունը ներկայացնելու վերաբերյալ: Նախորդ նիստի վերաբերյալ ոչ մի ծանուցում չստանալու պատճառով ժամանակին չեմ ներկայացրել հաշվետվությունը: - Այսօրվա նիստի ծանուցումը ստանալուն պես ներկայացրեցի փաստաթղթերի անհրաժեշտ փաթեթը և ներկայացա նիստին:**

Դեկան Մ.Գրիգորյանը փորձեց ճշտել

- Պարոն Վարդանյան ինչպես տեղյակ չեք եղել, եթե 10.11.2022թ ստացել եք Գիտության կոմիտեի կողմից ուղարկված գրությունը, որտեղ սահմանված են Գիտխորհրդի որոշումը Գիտության Կոմիտե ներկայացնելու ժամկետները:

Թ. Վարդանյան - Ես չեմ ստացել Կոմիտեի կողմից ձեր նշած գրությունը, Կոմիտեն չի թելադրում ձեր նիստերի նշանակման օրը, դա չենք քննարկում: Ինչ որ ներկայացրել եմ ձեզ (նախապես ուղարկված) դրանից ավել չեմ ներկայացնելու: Ինչ որ ներկայացրել եմ արդեն գնացել է գիտության կոմիտե, այն ընդունված, փակված է: Ձեր դիտողությունները չեմ ընդգրկելու և չեմ պարզաբանելու, որովհետև հաշվետվությունն այնտեղ է, այնտեղ ստեղծվելու է հանձնաժողով և չեն նայելու մեր հարց ու պատասխանին: Անկախ հանձնաժողովը չի նայելու ձեր կարծիքներին, անկախ էքսպերտը տալիս է իր կարծիքը հետո գիտության կոմիտեն համեմատում է այդ կարծիքները, համեմատում է նաև կազմակերպությունից ստացված կարծիքը և գիտության կոմիտեն որոշում է շարունակել արդյոք ֆինանսավորումը թե ոչ: Ներկայացված հաշվետվությանը ավելացնելու բան չունեմ, եթե հարցեր ունեք կարող եմ պատասխանել դրանց:

Դեկան Մ.Գրիգորյանը մեկ անգամ ևս ներկայացրեց գիտության կոմիտեի կողմից ուղարկված գրությունը և նշեց, որ թեմայի կատարող/գիտաշխատող Տ.Սաֆարյանի միջոցով ա/թ դեկտեմբերի 5, 6 տեղեկացրել է գիտական ղեկավարին՝ հաշվետվությունը ներկայացնելու:

Մարատ Գրիգորյան – Տաթևի՛կ, այդ մասին ասվել է քեզ?

Տաթևիկ Սաֆարյան – Այ՛ն

Մարատ Գրիգորյան - Փոխանցել եք ղեկավարին?

Տաթևիկ Սաֆարյան – Այո՛

Մարատ Գրիգորյան - Ես դիմեցի Գիտության կոմիտե, պարզաբանելու ընթացիկ հաշվետվության քննարկման գործընթացը, որից հետո ԵՊՀ-ի գիտական գծով պրոռեկտորը դեկտեմբերի 14-ին տեղյակ պահեց, որ Թ.Վարդանյանը կներկայացնի հաշվետվությունը ֆակուլտետի խորհրդում քննարկվելու:

Հարց Ս. Սուվարյանի կողմից - պրն.Վարդանյան եթե մեր քննարկումը ոչինչ չի տալու, դուք առաջարկում ե՞ք չքննարկել ներկայացված հաշվետվությունը

Թ.Վարդանյան – դուք իրավունք չունեք չքննարկել հաշվետվությունը

Դոց. Ռ.Ս.Մովսեսյանը փորձեց ճշտել հաշվետվության բովանդակությունը, և նշեց որ ներկայացված հաշվետվության մեջ չկա ոչ մի կոնկրետություն, արդյունքներ և հստակ կատարած աշխատանք: Նա նշեց նաև, որ Կառավարությունը 2022թ դեկտեմբերի 8-ին ընդունել է նույն վերնագրով N1912 որոշումը, ապա որն է գիտական ծրագրի դերն ու գործառույթը:

Նիստը երկխոսության չվերածվելու համար Դեկան Ս.Գրիգորյանն առաջարկեց խորհրդի անդամներին ներկայացնել կարծիքներ և առաջարկություններ ներկայացված հաշվետվության վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ջրաօդերևութաբանության և Ֆիզիկական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց.Ա.Թ.Գրիգորյանը ներկայացրեց հաշվետվության պահանջը և իրականացված աշխատանքը:

“Իրականացվել են Սևանա լճի ավազանի գետերի արխիվային և մոնիթորինգ դիտարկումների անալիզ և սինթեզ” - որևէ նախադասություն անալիզի և սինթեզի մասին չկա:

“Անբավարար դիտարկումների շարք ունեցող գետերի համար ընտրվել են անալոգային գետեր, որոնց օգնությամբ կիրառելով ռեգրեսիայի մեթոդը վերականգնվել են այդ շարքերը” - որոնք են այդ անալոգ գետերը, ինչ վերականգնող շարքեր կան բացարձակ խոսք չկա, բացի այդ լեռնային գետերը որպես անալոգ չի կարելի ընդունել:

“Դիտարկումներ չունեցող գետերի համար վերականգնվել են տվյալ գետերի ջրաբանական բնութագրիչները” – որ գետերի, ինչ արդյունք, որևէ արդյունք չկա:

“Ուսումնասիրվել են ջրաբանական բնութագրիչները այս տվյալները մեզ հնարավորություն են տալիս կազմելու ավազանի ջրային հաշվեկշիռը իսկ առանձին դեպքերում ճշտելու նաև ջրաբանական որոշ պարամետրեր” - ոչ մի տվյալ և արդյունք չի ներկայացված:

“Հիդրոօդերևութաբանական շարքերը հնարավորություն կտան նաև գնահատելու դրանց դինամիկ փոփոխությունները, որոնք հիմք են դառնալու կանխատեսելու ավազանում կլիմայի գլոբալ փոփոխության կոնտեքստում սպասվող ապագա

ջրային ռեսուրսների խոցելիության աստիճանը և մշակելու հարմարվողականության ուղիներ՝ կառավարման պլանի համար” - որևէ հիմնավորում չկա, չկա արդյունքների վրա հիմնված եզրակացություն:

“Մեանի ավազանի հյուսիս-արևելյան կողմի գետային ավազաններում՝ Ձկնագետի ավազանից սկսած մինչև Մասրիկ գետի ավազանը: Դաշտային դիտարկումները տևել են տասը օր (ս.թ. հուլիսի 27-ից մինչև օգոստոսի 5-ը ներառյալ), որին մասնակցել են թեմայի ղեկավարը և երկու կատարողներ: Ձկնագետը, Դրախտիկը և Մասրիկը: Այս երեք գետերում, ամենօրյա ռեժիմով, կատարվել են ջրաչափական աշխատանքներ” – որ գետում ինչ արդյունք են արձանագրել, որևէ գետում իրականացված չափման տվյալ չկա: 10 օրում ցամաքած գետերի վրա ջրաչափական աշխատանք իրականացնելն անիմաստ է:

“Թեմայի իրականացման ընթացքն ու ձեռքբերումները” բաժնում որևէ գիտական նորույթ, ձեռքբերում, տպագրված հոդված նշված չէ:

Դոց.Ա.Գրիգորյանն առաջարկեց չընդունել ներկայացված հաշվետվությունն և դադարեցնել ֆինանսավորման ընթացքը:

Պրոֆ.Պ.Էֆենդյանը նշեց, որ գոյություն ունեցող ընդհանուր կարգ և պահանջ կա և բոլոր ղեկավարների համար նույնն է: Մինչև կոմիտե ներկայացնելը գիտական ղեկավարը պարտավոր է կատարված աշխատանքները և ստացված արդյունքը հաշվետվության տեսքով ներկայացնել քննարկման:

Պրոֆ.Ա.Ավագյան – ես գտնում եմ, որ հնարավոր չէ հաշվետվության մեջ նշված է 100 կմ երկարությամբ տարածքն ուսումնասիրել է 3 օրում:

Դոց.Ս.Սուվարյանն առաջարկեց նիստը շարունակել հաշվետվությունը ներկայացնող ղեկավարի դահլիճը լքելուց հետո՝ ելույթներն ընդհատելու պատճառով:

Դեկան Մ.Գրիգորյանը խոստացավ միջնորդել և խնդրել Թ.Վարդանյանին չընդհատել ելույթները:

Դոց.Ս.Սուվարյանն անդրադարձավ հաշվետվության բովանդակային բաժնում նշված “համապարփակ պլանի մշակմանը”, “տարիների ընթացքում կատարված աշխատանքը”, “մինիմալ հոսքի չափումը” արդյոք նշված արտահայտությունները կառավարման խնդիր են լուծում, և նշվածներից որը

կապ ունի կառավարման հետ? Նման վերնագրով ու ներկայացված պլանով աշխատանք հնարավոր չէ իրականացնել: Հաշվետվության մեջ հանդիպում է **“գրեթե կատարվել է”** արտահայտությունը – ով է **“գրեթե կատարված”**-ով ներկայացնում հաշվետվություն: **“Հայաստանում ջրային ռեսուրսների կադաստրային աշխատանքներն իրականացվել են ըստ ներկայացվող պահանջի”** - այսինքն ուսումնասիրել են կադաստրային աշխատանքները և ներգրավում են որպես իրենց կողմից անելիք: **“Կադաստրային աշխատանքներ և ավագանի մոնիթորինգ”** – ինչ է նշանակում: Ելույթի ավարտին Ս.Սուվարյանն առաջարկեց չընդունել ներկայացված հաշվետվությունը:

Դոց.Վ.Գրիգորյանն իր ելույթում նշեց, որ ներկայացվածը ոչինչ չասող դեկլարատիվ բնույթի հաշվետվություն է և առաջարկեց սահմանափակել ելույթները:

Պրոֆ.Վ.Բոյնագրյանը ներկայացրեց, որ հաշվետվությունը շարադրված է 3.5 էջերի սահմաններում, գրված է թե ինչ աշխատանքներ են կատարվել և թե ինչ է նախատեսվում իրականացնել հաջորդ տարում: Հաշվետվությունում նշված է, որ գիտաշխատողները գնացել են դաշտ, սակայն հաշվետվությունում որևէ դաշտային նյութ, դաշտային չափման տվյալ առկա չէ ինչը չի համոզում դրանց իրողության մասին: Մեկ տարվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ որևէ գիտական հոդված հրատարակված չէ: Հաշվետվության մեջ նշված է, որ բոլոր փոքր գետերը Հայաստանում ամռանը չորանում են, դա նորություն չէ: Եթե գիտական աշխատանք չէր իրականացվել կարելի էր գոնե տարածքի ուսումնասիրվածության վերաբերյալ հոդված գրել: Ամփոփելով նշեց, որ թեմայի կատարման համար հատկացված երկու տարիներից առաջին տարում գրեթե ոչինչ արված չէ և առաջարկեց չընդունել հաշվետվությունը՝ դադարեցնելով ֆինանսավորումը:

Դոց.Շ.Խաչատրյանը հանեց իր ելույթը

Դոց.Ա.Աղինյանը նշեց, որ ներկայացված թեման սխալ ընտրած թեմա է և ընդհանրապես կապ չունի Սևանա լճի և նրա ավագանի ջրային ռեսուրսներ կառավարման արդի խնդիրների հետ: Խոսքում Ա.Աղինյանը նշեց, որ 2016թ-ին Հայաստանի հանրապետությունը պայմանագիր է ստորագրել Եվրամիության հետ ջրային

ռեսուրսների կառավարման վերաբերյալ: Հաշվետվության մեջ նշված է **“Նախատեսվում է համագործակցություն Մանկտ-Պետերբուրգի Ռուսական ջրաօդերևութաբանական պետական համալսարանի հետ”** ինչը հակասում է Հայաստանի ստորագրած համաձայնությանն ըստ որի ՀՀ ջրային օրենսգիրքը համապատասխանեցվելու է Եվրամիության հինգ դիրեկտիվներով, այսինքն ՌԴ իրավունք չունի մեր ջրային ռեսուրսների կառավարմանը որևէ կերպ առընչվի: Հանրապետությունում առանձնացվում են ջրային մարմիններ, ինչի մասին ընդհանրապես ոչինչ չկա ասված հաշվետվության մեջ: Ջրային մարմինների առանձնացումից հետո նոր դրվում է մոնիթորինգի կետ: Հաշվետվության մեջ նշված է **իրականացվող մոնիթորինգի մասին**, իրականում մենք ունենք Մոնիթորինգի կենտրոն, որը դիտակետ չունի, քանի որ դա բավականին ծախսատար է (թանկ հաճույք), նշված տվյալները ամփոփ ներկայացված են համացանցում: Սա հաշվետվություն չէ այլ կարծիք է հաշվետվության մասին, իսկ հաշվետվություն ես չեմ տեսնում, արխիվային նյութերի մոնիթորինգ է իրականացվել, իմ կարծիքով Պայմանագիրն էլ նման է “սոցիալական նպաստի փաթեթի”, երկու տարի մի թիմ աշխատի և նման հաշվետվություն ներկայացվի:

Պրոֆ.Վ.Վարդանյանը – ելնելով հաշվետվության բովանդակությունից ,ես նույնպես գտնում եմ **21T-1E192 ծածկագրով թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացվող գիտական թեմայի** հաշվետվությունը չընդունել և դադարեցնել ֆինանսավորումը:

Դեկան Մ.Ա.Գրիգորյան – գիտական թեման ֆինանսավորման ներկայացնելու ժամանակ անկեղծ ասած ես մտահոգություն ունեի, թեմայի կատարման առումով, բայց ելնելով Թրահել Վարդանյան – ամբիոնի վարիչ-ղեկանատ հարաբերություններից ես ձեռնպահ մնացի կարծիք հայտնելուց: Գիտության կոմիտեի կողմից թեման առաջին անգամ մերժվեց, բայց բողոքարկման արդյունքում այն հաստատվեց: Ես նույնպես գտնում եմ, որ այստեղ գիտական հաշվետվություն չկա և եթե Գիտության Կոմիտեում կան փորձագետներ, ովքեր աչք են փակում նման հարցերում, ապա մենք պարտավոր ենք ուշադիր լինել: Կիսում եմ այն կարծիքը որ գիտական աշխատանք չի կատարվել այն չպետք է ընդունել և հետագայում չֆինանսավորել:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Չընդունել հաշվետվությունը և չերաշխավորել հետագա ֆինանսավորման:

ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 29, ՁԵՌՆՊԱՀ՝ 1, Չընդունել 21T-1E192 ծածկագրով թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացվող գիտական թեմայի ընթացիկ հաշվետվությունը և չերաշխավորել հետագա ֆինանսավորման:

5. ԸՆԹԱՅԻՆ ԿԶԱՐՅԵՐ

5.1 ԼՍԵՑԻՆ. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի հայցորդ Լեմգա Հունանի Հունանյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի հայցորդ Լեմգա Հունանի Հունանյանի ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել «**Բազային տարածական տվյալների ԱՏՀ մոդելավորումը և ներդրումը ազգային գեոպորտալում**», իսկ գիտական ղեկավար նշանակել Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, տեխ. գիտ. դոկտոր Պարույր Սերգեյի Էֆենդյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 30 ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0 Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի հայցորդ Լեմգա Հունանի Հունանյանի ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել «**Բազային տարածական տվյալների ԱՏՀ մոդելավորումը և ներդրումը ազգային գեոպորտալում**», իսկ գիտական ղեկավար նշանակել Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, տեխ. գիտ. դոկտոր Պարույր Սերգեյի Էֆենդյանին:

5.2 ԼՍԵՑԻՆ. ղեկան Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը ԱՊՀ Ցանցային համալսարանի շրջանակներում Պերմի համալսարանի առաջարկության վերաբերյալ՝ ԵՊՀ-ի համապատասխան ֆակուլտետների հետ իրականացնել կրկնակի դիպլոմով մագիստրոսական ծրագրեր 1+1 ձևաչափով, այն է՝ 1 տարի ուսուցում

ընդունող համալսարանում, մագիստրոսական թեզերի համատեղ պաշտպանություն, կրկնակի դիպլոմով մագիստրոսական ծրագրի յուրացման դեպքում՝ երկու դիպլոմների տրամադրում:

ԵԼՈՒՅԹ ՈՆՆԵՑԱՆ. Դեկան Մ.Գրիգորյանը նշեց, որ բավականին լավ առաջարկ է, որը լրացուցիչ հնարավորություններ է ընձեռում թե Երկրաբանության և թե Աշխարհագրության մասնագիտության ուսանողներին խորացնելու իրենց մասնագիտական գիտելիքները: Առաջարկեց 1. հստակեցնել Երևանի և Պերմի համալսարանի մասնագիտությունների ցանկը, որոնցով ուսանողները ուսումը շարունակելու հնարավորություն կունենան: 2. Մինչև 05.01.2023 դեկանատ ներկայացնել առաջարկություններ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Առաջարկությունն ընդունել ի գիտություն:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան